

ԲԱԺԱՆՈՐՈ ԱԿՐՈՒԹԻՒՆ
 Պուշկարիոյ համար
 Տարեկան 10 Պր.
 Վեցամսայ 5 »
 Արտատպանի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսայ 6 »
 ԿԱՆԻՒԿ ՎՃՃՐԵԼԻ
 —)(—
 Գրութիւնք եւ լին տրուի
 —)(—
 Իրանացի սոյր 20 սան-
 քիւմ հ. Լրեխի սեւի սե-
 քանկերու համար 20 Օլո
 գնդ կրնայ :

ՇՆԱՐԻՔ

Նամակ եւ դրամ դրկեր
 Մ. Բրուզուրիսեան հասցեին

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoun»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: А. Сукьясовъ.

ԾԵՐԱՅԱԾ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Ունենք մի քանի հայեր, որոնք հայրենասէր գործիչ տիրազոտն են ստացել այն բարի ու հին ժամանակներից, երբ երեք անգամ «Հայաստան» բառը կրկնողին, հայ ժողովուրդը գործիչ և ազգասէր էր հռչակում: Սրանց մէջ իրաւ կան այնպիսիները, որոնք մի ժամանակ օգտակար են եղել մեր հայրենիքին և ժողովրդին, բայց այսօր ձեռքերը կեն հոգով ու մտքով և մեր ժամանակի համար բոլորովին անպէտք դարձել, որովհետեւ ոչ ներկայ դժուարին գործունէութեան յարմար զարգացում և ըմբռնում ունեն, ոչ էլ կորով ու եռանդ: Բայց ցար Նրանումն է որ այդ ձեռքացած և գրեթէ բոլորովին անպէտք գործիչները չեն ուզում հասկանալ թէ իրանց ժամանակը անցել է անդառնալի կերպով, իրանք անկարող են բաւարարութիւն տալ մեր կեանքի ներկայ պահանջներին և ընդունակ չեն լուծելու մեր առջեւ դրված այն բարդ խնդիրները, որ իրանք երազել անգամ չէին կարող: Մի խօսքով չեն ուզում հաշտվել այն ճշմարտութեան հետ, որ ժողովրդային կեանքի ամեն մի շրջանը իր պահանջներին յարմար մարդկանց պէտքն ունի և բացասութիւն են կազմում այն գործիչները, որոնք ընդունակ են լինում միանալու նոր շրջանի ժողովրդական գործիչների հետ՝ հասարակական իրազդանքը իրագործելու համար:

Այդպիսի բացասական հայ ձեռքացած գործիչներ մենք չունենք. որովհետեւ վերջին տարւոյում մեր նոր սերունդը այնպիսի մի ոտտիւն արեց և հայկական կեանքի մէջ այնպիսի յեղաշրջում առաջ բերեց, որ ուրիշ ազգերի մէջ հազիւ 25 տարւայ մէջ է եղել: Այդպիսով ձեռքացած գործիչներ և նորերի մէջ մտածելու, ձգտումների այնքան մեծ տարբերութիւն ա-

ռաջացաւ և այնպիսի մեծ վիճ բաժանեց նրանց, որ անհնարին է ձեռք ձեռքի տալ ու մեր վերածնութեան գործը միասին շարունակել: Այսօր նոր սերունդը առանց ուշք դարձնելու անդունդի միւս կողմը մնացած ձեռքերի վրա՝ գնում է դեռ վաղուց գծված ճանապարհով. որովհետեւ ժամանակը թռչում է և հայ երիտասարդ գործիչը լաւ համոզված է թէ այն ժողովուրդները, որոնք ժամանակին համապատասխան տարգրութեամբ չեն աշխատում իրանց գոյութիւնը ապահովել՝ ոչնչանում են. նա զգում է որ եթէ ինքն էլ չշտուպի, անգութ ժամանակը, օտար զօրեղ տարրերին իր ձեռքում գէնք դարձնում՝ շուտով կուլ կը տայ և հայ ժողովրդին, ինչպէս կուլ է տել աւելի մեծաքանակ, բայց ժամանակի պահանջները չըմբռնող շատ ազգերին:

Հայ նոր գործիչները գնում են առաջ. կասարում իրանց ամենամեծ պարտականութիւնը և սպասելու միջոց չունեն. որովհետեւ ժամանակը շատ թանկ է, և գանդաղումը կորստաբեր. իսկ ձեռքացած գործիչները կանչում են նրանց ետեւից. կանգնեցէք, միասին գնանք, դուք անփորձ էք, օտար ներշնչումներն են ձեզ գրգռում— և ուրիշ շատ պատուական խօսքեր. ճիշդ այն ձեռքերի և յամառ հայրերի պէս, որոնք իրանց քառասուն տարեկան և շատ խելացի զաւակին ատում են. սուս տղաս, այդպէս չի լինի, դու անփորձ ես. ես զուր չեմ 60 տարի տպրել աշխարհիս վրա, և այլն:

Առ հասարակ ձեռքերը երբէք չեն ուզում ընդունել նոր ժամանակի և նոր մարդկանց առաջնութիւնները. որովհետեւ ըմբռնելու ընդունակ չեն և միշտ տրամադիր են իրանց աւելի խելացի կարծելու: Մեր ձեռքացած գործիչներն էլ չեն ուզում հասկանալ որ այժման 25—30 տարեկան կրթված հայ երիտասարդը, իրանցից աւելի փորձված և խելացի է. որովհետեւ թէ ձեռքերի սովորածն է ուսել և թէ շատ

րան էլ աւելի. բայց ի դրանից՝ ունի և երկրասարդին միայն՝ յատուկ եռանդը. քաջութիւնը և անձնադոտութիւնը. ուրեմն աւելի ընդունակ է գործելու քան մեր ձեռքացած գործիչները: Ուրիշ կերպ էլ անկարելի է. որովհետեւ եթէ նոր սերունդը իր խելքով և իր ընդունակութիւններով ձեռքերից աւելի բարձր չը լինէր, այն ժամանակ հայի իդէալական ձգտումները լոկ երազ կը մնային և ամեն ինչ կը մեռնէր ձեռք գործիչների հետ: Աստի, խօսքներս այդ ձեռքացած գործիչներին ուղղելով՝ թոյլ ենք պալիս մեզ ասելու:

—Ինք հայութեան իդէալներին հասնելու սանդուխտ առաջին աստիճանը կազմեցէք. կեցցէք, պատիւ ձեզ. գոհ մնացէք զրանով, մի խանդալէք: Երկրորդը պէտք է կազմի հայ նոր սերունդը, պէտք է անցնի ձեռք վրայով, ձեզ այնպէս պահեցէք որ ստեղծը մաքրի ապա անցնի...
 ՎԱՐՈ

ՕՐԸ ՕՐԻՆ

ՐԱՑՑԻ

Շատ աւելի բազդաւոր ուսահայ գրականութեան միւս հոյակապ մշակներէն՝ Արթուրեանէ, Նազարեանէ, Նալբանդեանէ և Պատկանեանէ, Բաֆֆի, որ Արթուրեանի հետ ուսաստան վիպագրութեան հայրն է. հոգը մըտնելն տառը տարի ետքը, վերջապէս կուեննայ իր մահարձանը, ժողովրդական նպաստով կանգնուած և ասոր համար, ալ աւելի արժէքաւոր:

Բաֆֆի աշխարհիս գրեթէ բոլոր նշանատր անձերու պէս, բուն իսկ իր կոչման ստպարէզը թեւակոխելէ առաջ, ուրիշ սպասարէլներ զեղբերած է: Նախ վաճառական եղած է, յետոյ ուսուցիչ. և ճիշդ այդ երկրորդ զբաղումն է որ առիթ տուած է իրեն ճամբորդել Տաճկաստան, Պարսկաստան և Կովկասի զանազան պատմական վայրերը, ուր իր թափանցող հաճարով ուսումնա-

սիրած է հայուն կեանքը, և քրքրած անոր պատմական անցելալը: Բաֆֆի իր գրական գործունէութիւնը թէև ոտանաւորով սկսած՝ այլ շուտ մը վիպական սեռը ընդգրկելով արտագրած է այն հրաշակերտներ, որոնք ամբողջ հայ երիտասարդութեան ո՛չ թէ զբօսանքը՝ այլ ներշնչարանը կազմած են. որովհետեւ անոնք՝ յեղափոխութեան առաջին ուղիները տեսած են այդ էջերուն մէջ, ինչպէս նաև ինքնաճանաչութեան, պարտականութեան ու ապագայ փառքերու հեռապատկերներ:

Խենդը, Ոսկի աքաղաղը, Գաւթի պէկը, Զաւալէտինը, Սամուէլը, Կայծերը, Խաչագողի յիշատակարանը, իր գործը վերջապէս, բուն յիշատակարանն է, շատ աւելի վառաւոր և տոկուն, այն մարմարէ մահարձանէն զոր Կովկասի հայութիւնը բարձրացուց անոր զերեզմանին վրայ: Անոնք, այդ կրակոտ, ցնցող, վատութիւնները շնչող և ընտիր յատկութիւնները գարգիւտը երկերըն են որ շատոնց Բաֆֆիի ճակատին շուրջը բոլորած են անմահութեան զաւինները...:

Այն տեղ զարձակ տեղն է յիշելու մեծ հայը, Արծրունին, զի գրեթէ անոր է որ կը պարտինք Բաֆֆին. Գուցէ Յակոբ Մելիք-Յակոբեանը նվթական կարօտութիւններէ ստիպուած՝ ուէ աննշան սպարէզի մէջ կորսուէր, եթէ Մշակի հիմնադիրը չը բռնէր անոր ձեռքէն, չը պաշտպանէր զայն, վերջապէս չը մտցնէր այն ուղին որուն մէջ այնքան ծառայութիւններ պիտի մատուցանէր:

Արծրունի և Բաֆֆի անբաժանելի գործակիցները զարցած էին այլ ևս. մին իր յօդուածներով կը բարոյէր, միւսը իր վէպերով ժողովրդին ամէն խաւերուն մէջ կը թափանցէր և կը կերպարանափոխէր զանոնք...:

Վ. ՀԻԻՄՈՒՉ

—)(—

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Աղիսաւանդիս, 3 Հոկտ.

Ազգ. յուրերէ զուրկ ենք: Առաջնորդական խնդիրը Օրմանեանին փորձն մէջ թաղուած է. որովհետեւ մեր գիւտնադէտ Պատրիարքը միշտ կուգէ մնալ քիսուսա կրտսա Սուրբանի մօտ: Չարմանալին կամ ծաղրելին այն է որ, Իրմիրլեան Սրբազանի կամքը հարցուցին, եւ յետոյ, տեղեկագիրքը առանց վաւերացնելու թաղրի տուին, լրկ իր Պոլիս փոխադրութիւնը խնդրելով չոր ու ցամաք կերպով: Երուսաղէմի խոնարհ կլիմային տակ կը տառապի ան, 1,650 զրու: ի ամսաթոշակով մը (որուն անուանականն 2,000 էր) այն ալ միշտ յետնեալ վիճակի մէջ:

Հոս կատարեալ լափերինդոս մըն է: Աղագային իշխանութիւն մը կայ, միայն երկու անձէ բաղկացած, որ ամէն ինչ է. թաղական, վարժարանաց հոգաբարձու, մասակարար, գանձապետ, ատենապետ, կալուածներու հոգաբարձու, եւ այլն, եւ այլն: Ուրիշ անգամուան վերապահելով խօսիլ այս մասին, փութամ զբաղիլ օրուան հրատապ խնդրով:

Անշուշտ իմացած ըլլալու էք: Անիշխանականներու դաւադրութեան մը այստեղ երեւան գալը, նպատակներն չիտակէ շիտակ Կերմանիոյ կայսրը աշխարհիս երեսէն սրբելն էր. այնպէս որ առանց ոտակականան աջալուրջ հսկողութեան, շատ ողբերգական վախճան մը պիտի ունենար Վիճակի կրօնա-քաղաքական ուղեւորութիւնը:

Աղբքանդրիոյ ոտակականութիւնը Գահրէի խաղաղական հիւպատոսէն հետագիր մը ստացած ըլլալով թէ երկու կտակածելի անիշխանականներ նոյն քաղաքէն միկնած են Բոս-Սայիս հրթալու համար, իրիկունը յանկարծ ինը իտալացիներ ձերբակալեց: Աստուք բոլորն ալ ծանօթ էին արդէն իբր գործնական անիշխանականներ եւ այդ կարգի գաղափարներ տարածողներ, բացի մէկէն, որ անիշխանական մարմին մը կողմէն զրկուած պատուիրակ մը ըլլալ կը կարծուի:

ՎԱՐԳ-ՊԱՏՐԻԱՐԿԻ ՅԻՇԱՍԱԿԱՐԱՆԸ (41)

Այդ սեղ Մաքսիմովը ուսուերէն ինձ յայտնեց թէ շատ լաւ եմ արել որ չեմ ստորագրել, որովհետեւ նրանք իրաւունք չունենին առանց իր մասնակցութեան իմ մեղադրականը կազմել եւ ինձ ստորագրել տալ:

Նախագահը ինձ զիմեց հարցնելով արդեօք չէ՞ր ցանկալ փաստաբան վարձել:

Այս յայտնեցի որ ոչ զրամական միջոցներ ունեմ եւ ոչ էլ մարդ եմ ճանաչում, որի միջոցաւ կարողանայի Պոլսի մէջ ինձ պաշտպանող փաստաբան գտնել, մասնաւոր որ, չեմ էլ սպասում թէ ո եւ է փաստաբան սիրտ անէր ինձ պաշտպանելու տաճկական դատարանի առաջ:

— Բայց ինչու, չէ որ դուք Պոլսում բաւական ապրել էք. անշուշտ եւ բաւական ծանօթներ կուենեաք. չարունակեց նախագահը:

— Այ, չունեմ, եւ եթէ ունենամ էլ ձեզ չեմ ասի:

— Այն ժամանակ դատարանը ձեզ համար փաստաբան կը նշանակի. ասեց նախագահը:

— Դրա պէտքն էլ չեմ զգում եւ բորովին աւելորդ ձեւակերպութիւն:

Մուհարէմ պէյ թաղին մէջ, գիտեմաճառի մը խանութէն քանի մը սուրբեր գտնուեցան. որոնք երկաթէ թելերով շրջապատուած են եղեր. վերջապէս պատրաստուած բոլոր այն խնամքներով, որ պայթում մը աւերիչ կը դարցնեն:

Կրտսի թէ անիշխանական խմբակին ծրագիրն էր Գահրէի Աստիւնի պալատը օղբ հանել կայսեր հոն գրանուած ատեն, քան մը որ նոյն լսկ խտիվին սպանուած առաջ պիտի բերէր: Բայց երբ վիճակէմ հրաժարեցաւ Գահրէի ճամբորդելու գիտատրութեան, անիշխանականներն ալ փութացին իրենց ծրագիրը բարեփոխել: Այս անգամ սուրբերը Պաղեստին պիտի փոխադրուին Եղեր: Այս փոխադրութիւնը պիտի կատարէր Աղեքսանդրիակ Սուրբա մեկնող շողանաւին սպասաւորներէն մէկը, որ կաշառուած է եղեր Մուհարէմ-պէյ թաղին գինեվաճառին ձեռքով: Բոլոր այս յայտնութիւնները տակն ու վրայ ըրած են քաղաքիս բնակչութիւնը:

Կ. Պոլս, 6 Հոկտ.

Վերջապէս: Այնքան տենդով սպասուած օգոստոսիս հիւրերը հասան, այս առաւօտ, ժամը 4ին:

Արշալոյսէն սկսեալ ամէն կէտեբու վրայ իշխող ոգեւորութիւնը անկարողութիւն է: Բոլոր այն ճամբայներուն վրայ ուսկէց որ թափորը պիտի անցնէր ահապին ամբոխ մը կը սպասէր, ահապին թուով լրտեսներու հետ խառնուած: Հոնցոլերն զբօսանաւին Տօլմա-Պահձէ հասած վայրկեանին, թնդնօթիներու օրոտումը պատերազմի ճամբարիս դաշտի մը կը վերածէր Վոսփորը: Կայսրը եւ կայսրուհին թրքական շողեմակոյցով մը ցամաք ելան եւ ընդունուեցան Սուրբանին կողմէն, ապա ամենքը միտսին, պալատական կառքերով Երլտըզ դաջին Տօլմա-Պահձէի պողոտանէն, որուն երկու կողմերը հեծեալ եւ հետեակ զօրքերու ամբակուտ պարիսպներ շարուած էին. այնպէս որ ոչ ոք Պոլսոյ մէջ պիտի կրնայ պարծենալ թէ այդ կայսերական գէմքերը տեսած է: Մեծ կորուստ մը չէ անշուշտ: Կերմանիոյ վեհապետները պիտի բը-

նակին իրենց համար յաակապէս կառուցուած քէօշկին մէջ, որուն շքեղութեան մասին առասպելական բաներ կը պատմուի: Վաղը զիշեր նմանը շտեմուած լուսավառութիւն մը պիտի ունենանք: Պոլիս զի թական սեսարան պիտի պարզէ. մինչ ամենէն ճոխ սեղանին շուրջը բոլորուած, անոնք, ժողովուրդին արեւնէն քամուած կարմիր պատտաները կու պիտի սան: Բայց թողունք այդ տխուր խոհեքը հանդէսի եւ... ուրախութեան այս ժամբուն: Խնկի, բանականութեան խնդիրը մէկ կողմ թողուած է: Մամուլը ամբողջապէս այս ուղեւորութեամբ լեցուած է. ամէն ոք, ըլլալ խմբագիր, ըլլալ պաշտօնեայ կամ հասարակական մարդ, մէկ մտածում մը միայն ունի. կեղծիք, չողոքորդութիւն շոյալել, եւ զանոնք նոր ձեւերու տակ ներկայացնել: Կերման գաղթաւանութեան խանթը մեծ է. յատուկ շողեմակներով գացած էին իրենց կայսրը ընդունելու. այս նպատակ մասնաւոր, գերմանները այնքան շատցած են հոս, որ կարելի չէ երկու քայլ ատենը ստանց անոնց խարտեալ մօրտեքին եւ կոկորդային բարբառին հանդիպելու:

Հայերը արդէն սկսած են Կերմանիոյ կայսեր այցելութեան բարի հետեւանքները վայելել... Արդէն անոր հասնելէն առաջ, հարկիւ աւելի անմղ հայեր ձերբակալուեցան: Կը գուշակէք պատճառը: Թուրքը միշտ կը սիրէ հայ յեղափոխականները ծայրայեղներու (անիշխանականներու այս անունը կուտան հոս) հետ չփոթել: Եւ յետոյ, այնքան յարմար ատիթ էր հայերը քիչ մը շարժելու, որ... բարեխում կրտավարութիւնը չէր ուզեր զայն ձեռքէ հանել: Դուրսէն եկողները ամէն ատեն աւելի խտտութեանց ենթարկուած են: Կըսուի թէ ինչպէս միւս կրօնական պետերը, նոյնպէս ալ մեր ատրիարքը պալատ պիտի երթայ բարի գալուստի այցելութեան. եւ սակայն ստարակոյս չկայ թէ թահսին պէյի սենեակէն անդին չլլուի երկնայայ այս այցելութիւնը:

Գահիրէ, 1 Հոկտ. Ամսոյս 27ին, Աղքատախնամ Ընկերութեան մը կազմակերպութեան ձեռնարկուեցաւ: Հիմնադիրները տեղացի եւ գաղթական աղագայիններէն են: Ուրախալի էր տեսնել թէ ինչ սիրայօժարութեամբ ամեն ոք փութաց իր լուծան նուիրել տառապող նեղեցիկ վիճակը բարւոքելու համար:

Թէեւ քիչ մը ուշ մնացած է այս ձեռնարկութիւնը, եւ սակայն միութեամբ կան է որ գոնէ ակէց ետքը, հիւանդ պանդուխտը մեղքեցող մը պիտի գտնայ եւ չպիտի փափու խոնար ու թօնուտ նկուղներու մէջ: Սպասելով որ տեղույս բոլոր աղագայինները աջակցութեան ձեռք կարկանեն նորահաստա ընկերութեան մեր անկղծ շնորհաւորութիւնը կը մասուցանենք անոնց՝ որ այնքան անձնութեամբ աշխատեցան ընկերութեան հաստատման համար:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՍԱԿՆԵՐ

—)(—

Թողնենք ուրեմն առ այժմ Բահվանը, զինք ակոսող ճանապարհները ու իր երկու կողմը պարփակող Տաւրոսի ու Անալուսաւրոսի օղակները, եւ միշտ դէպի առաջ ընթանալով, դանք անցնինք Պաշխանը՝ որ շինուած է այս դաշտահովտի հարաւային մասի վրայ, Մուար ու Խախեվ հայ զլւլերի արեւմտակողմը: Հոս քիչ մը նստինք այս տեղ որ ջաջող թուրք անկանոն ու վայրենի զապլիաների ալտոտ սենեակի պատահանի զիմաց, ու մըտիկ ընելով պիտի լսենք անոնց պիղծ բերաններէն շատ մը ստույգ ու սրտածմլիկ պատմութիւններ՝ որ սրտածմլիկ պատմութիւններ՝ Հայաստանի կոտորածէն առաջ ու վերջ իրենց անարգել շահատակութեանց արդիւնքն են... Ատոնք, այդ Մէհմէտի անի-

աշխատութիւն եմ համարում: Ձեր նշանակած փաստաբանը ինձ չի պաշտպանի. նա ինձ համար երկրորդ դատախազ կը լինի. ձեր մէկ գատախազն էլ բաւական է ինձ գատապարտելու համար. վերջապէս ես ինձ պաշտպանելու պէտք չեմ զգում. եթէ ինձ անհրաժեշտ է փաստաբան ունենալ, այն ժամանակ կը խնդրեմ իմ կառավարութեան ներկայացուցչին, որ ինձ համար փաստաբան ձարի:

Եւ զիմեցի Մաքսիմովին: Ան հասարակ խօսքերս միշտ ուղղում էի նրան, խօսում էի ուսերէն. ամեն կերպ աշխատում էի ցոյց առ իմ արհամարանքը թուրք պաշտօնեայներին: Ինչպէս հիմա ինձ թվում է, երբեմն էլ այդ արհամարանքը չափազանցում էի, եւ հասցնում բորբոքած պատասխանական խորտուութեան. այն ինչ, այն սեղ հարկաւոր էր ասելի պաղարիւն եւ շատ լուրջ արհամարանք, թիրեւս այդ էլ արդիւնք էր իմ հասակի եւ սարօրինակ հանգամանքների:

Իմ առաջարկից յետոյ, նախագահը զիմեց Մաքսիմովին հարցնելով. թէ արդեօք նա ընդունում է իմ խնդիրը: Մաքսիմովը պատասխանեց որ ինքը պարտաւոր է իմ խնդիրը հա-

ղորդել զիսպանին եւ համոզված է որ կը կատարվի, որովհետեւ իրանց պարտականութիւնը է ցարի հստատակին ամեն կերպ պաշտպանել:

Դրանից յետոյ մեզ քայլ թողին: Կրկին բռնտ վնասցինք: Սկսվեց իմ սովորական տաղտկալի կեանքը: Երկու շաբաթ անցան, զեռ Մաքսիմովը չէր երեւում եւ փաստաբանի խնդիրը առկախ էր մնացել: Վերջապէս նա մի օր եկաւ, բերեց մեղադրականիս պատճէնը Փրանսերէն լեզով, եւ հարողեց որ այնքան ուշանալու պատճառը իմ մասին տաճկական գատարանի եւ գատախազի հետ ունեցած ընդհարումները ու անհամաձայնութիւնները էին: Յայտնեց որ առաջին մեղադրականը թուրքերը միայն իրանք էին կազմել, առանց իր մասնակցութեան՝ եւ ես շատ լաւ էի արել որ չէի ընդունել, միջազգային օրէնքն էլ այդպէս էր պահանջում: Նա բացատրեց թէ թուրքերի միակ նպատակն էր որ ամեն մեղք ինձ վրա բարդին եւ ցոյց տան որ տաճկահայերը հանցիտ են ու խաղաղ, բոլորովին գոհ իրենց վիճակից: Բայց ուստահայերն են զալիս խտնելու: Այդ բացատրութիւնից յետոյ ես զգացի որ տաճկաները ուղղում են անուղղակի կերպով աշխար-

հին հասկացնել թէ ուստահայերը գալիս են ուս կառավարութեան զրկմամբ. իսկ ուստաներն էլ, ուղեով իրանց քաղաքական վարիչը բարձր պահել աշխատում են ամեն կերպ սպասուցանել որ տաճկահայերի վիճակը անտանելի է, նրանք ասանջվում են, դժգոհ են, ուղում են զուլս բարձրացնել եւ ուստահայերին իրանց տանջանքները նկարագրելով հրաւիրում են օչնութեան. գործի խառնվող ուստահայեր այդպէսով ուստաների համար քաղաքական բարդութիւններ են յառաջ բերում: Ձգարք որ ուստի պատմութիւնը այս խնդրում ուղած չուզած ինձ պէտք է պաշտպանել թուրքերի առաջ թէ ապացուցանելու համար որ տաճկահայերը իրանց վիճակը բարւոքելու համար յեղափոխութեան են դիմում եւ այդպէսով իր ուղած ժամանակ ճնշում գործընէր թուրք կառավարութեան վրա, թէ իր վրա եղած կտակածները փարատէր: Երկուսն էլ իմ սրտովս են, որովհետեւ իսկապէս շարժում պէտք է տաճկաստանցու կողմից լինէր որ քաղաքական նշանակութիւն եւ աղգեցութիւն ունենար, իսկ ազատվել է մի առանձին շահ էր:

(Շարունակելի)

ծած որդիներ՝ առանց մարդկային ամենատարական խղճահարութեան, գոռոզութեամբ կը պատմեն թէ՛ ինչպէս շարժան դամ երբ հայ կին մը՝ ստիպուած կը լինի որ և է գործի համար քաղաք երթալու, իրենք, զիշատիչ գազանի պէս վրան յարձակելու, առեւանքեր, ու իրենց այդ գազանային որջը տարեր՝ հրէշային ամենայն խայտառակութեամբ օրերով դայն լիկեր են. բաձարձակ կը խօսին թէ՛ այդ կողմեր միշտ աւարառութիւն գործող Ձիտուրցի քիւրդներուն ու Մուսայ պէկի առսլամ «ճառայ» գողերի հետ միացած՝ որսիւի շարիքներ գործեր են թէ ճամբորդ ու թէ մտակայ հայ գիւղացիներին :

Իրենք, այդ անպատկառ թուրք զապթիներ կը պատմեն թէ՛ ինչպէս Հայաստանի կոտորածի արժուոր օրերուն, հայ ճամբորդները բռնելով ոչխարի պէս այգ ընդարձակ խանի մէջ լեցուցեր ու յետոյ քիւրդ խուճերին հետ՝ այդ անմեղ հայ զիջողիկներ սրախոխող ընելով, անոնց բոլոր ունեցածները յափշտակեր են : թէ, աւելի երկարենք հոս՝ այս մարդակեր զապթիների բունինքով մեր սպասելը, աւելի՛ տխուր ու աւելի կսկծալի պատմութիւններով պիտի խռովին մեր սրտերը . . . : Արեւմտ սեւ թուրք մը ու արդար անէճք մը այդ ամբարիշտ կառավարութեան զազան պահապաններին . . . : Հեռանանք հայ յոյ Ս. արիւնով կարմիր ներկուած այս անգէն, ուր հայրենիքի անցեալ յիշատակների հետ՝ ներկայ դառնալէտ անցքերի ուրուսխանը՝ իր գալարիչ պատկերը կը պարզէ : Քիչ մը յառաջ երթանք՝ դէպի Մուար գիւղի հողերը, և երկու բլրակի մէջէն ձեւացող ձորակէ մը, Տիգրիսի մէկ բազուկը կազմող Պիթիլիսի գլխաւոր դետի ծագումը գիտենք : Այս գրախտի ակը՝ որ իր պատմական նշանակութիւնն ունի, անյիշատակ դարերէ ի վեր վկայ է մեր հայրենիքի փառքին ու աղէտներին . . . անոր ջուխակ ական զուլալ ջուրերը ճշմարիտ մօր մը անխառն արտասուքներն են որ կը թափին իր հարազատ զաւակների կոտորման ու հայրենիքի սեւ օրերին համար : Հոս՝ այս գրախտի ական դիմաց՝ ահա հային շէնքի մը վրաստակներէն ձեւացող աւերակ եկեղեցիի հողակոյտին վրայ թառած սեւ թըռչունը, մեր հայրենիքի լալկան հաւը՝ տեսակ մը տխուր մեղեդիի նման լացող եղանակով մը հայրենիքի թախճազին սուգի օրերը կը յիշեցնէ : Ամեն բան հոս իրական գոյներով կը պարզուի . . . ու պիտի թիւնը որ մեր սրտերը անսլալման կը սեղմէ՝ անպատմելի է : Այս տխուր պատկերին ազդեցութիւնը կը բազմապատկուի այն սպանն մանա-

ւանդ, երբ այսքան նուիրական յիշատակներով սրբացած ական մը եղերք, հոտած թիւրքի պիղծ զապթիան կուգայ իր սաղայէլական ապրէսթով ու կեղծ նամազով մեր Ս. ջրերն ու յիշատակները սրբապղծելու :

Սրբապղծուած այդ գրախտի ակնէն ոչ նուազ հեռու, աւերակ հայ գիւղի մը բեկորները ու գերեզմանոցի խաչաքարերը կը կանգնին : Ատոնք վկայ են մեր հայրենիքի կենդանի յիշատակներին : Քիչ մալ դէպի յառաջ ընթանալով, անցնինք Օղբով մեծ խանն, որ իր հսկայ զանգուածով պատկառանք կազդէ գանք հասնինք Փափէն հայ գիւղի ստորոտ, Ղարափու ի քիթի մէջ քիչ մը դէպի Բազէշ, երեսնիս կէս մը դէպի արեւելք՝ դիտենք այս հայ գիւղը : Այդ գիւղը որ մեր մանկութեան օրերուն 70-80 տուն բնակիչ ունեցող հարուստ հայերի բնավայր մըն էր, հիմայ անօրէն թուրքի զապանութեամբ իր կենսական բոլոր ուժերէն զրուած՝ թշուառութեան ու դառնութեան արագելարան մը դարձած կը թուի լինել իր հէգ բնակիչներին : Դառնութիւնը զոր կրած են այս ու նմանօրինակ գիւղացիները Հայաստանի ընդհ. կոտորածների ատեն՝ անպատմելի է : Ու այդ անտանելի հարուածի ծանր ազդեցութեան եթէ տակաւին կրրանան ապրիլ հոս ողորմելի հայ լեռնական ընտանիքները, ատոր միակ գաղտնիքը պէտք է փնտրուել հայրենական ու պապէնական այն այն անմոռանալի յիշատակների մէջ, որով իրենք այնքան սերտ կերպով կապուած են իրենց Ս. Թորոսին, իրենց քարուկիր պարզ եկեղեցիին, իրենց շէկ աւետարանին, իրենց Ս. Թժչիկին ու մանաւանդ իրենց լուսապտուղ Ս. Սահակին :

ՆԱՀԱՊՈՒՅՏ
(Շարունակելի)

Ք Ր Ո Ն Ի Կ

Վանայ Սալնապատի Ս. Գրիգոր վանքին մօտ նոր մանկանոց մը բացուել է սեպտ. 1 ին : Առայժմ հոս պատասպարած են 16 դեռատի որբուհիներ, որոնք ցորեկները կը յաճախեն քաղաքին Սանդխտեան երկսեռ վարժարանը :

Անցեալ Շր. օր, Պատրիարքը Թարապիտ, Անգլիական դեպուտատունը գացեր է, Սըր Նիքօլա Օ'Քոնօրի բարի գալուստ մաղթելու :

Սուրէ Պլաք հրէութիւն տակաւին Գում-Գարու Տ. Միքայէլ քահանային տունը կը մնայ : Գիճազդ ազլիկը անցեալները անձնասպանութիւն փորձեր է լուցքի գլուխները փոշի զերածելով և մտա մը կլլելով, բայց անմիջական դարմաններու շնոր-

հի ազատուել է : Հրէութիւն յայտարարել է իր մօր թէ ինքզինքը պիտի մեռցնէ եթէ չարունակեն դժուարութիւն հանել իր հայ ըլլալու փափագին իրադորման գէժ :

Սօֆիաի մէջ այս օրերս պիտի դատուին Էֆթիմ ու իր երեք ընկերները, որոնք Կ. Պոլսոյ մէջ հրատարակուած «Նովինի» պուլկար թերթին խմբագիրը սպաննած էին :

Կրօն. ժողովը անողոք վճիռ մը տուած է Սօֆիայ բնակող Տ. Մկրտիչ Քէրէստեճեանի մէկ խնդրադրին : Տ. Քէրէստեճեան ասկէջ առաջ, իր օրինաւոր կինը թողլով, պուլկար Սինոգէն կրկնամուսուլթեան հրաման ստացած և պուլկար եկեղեցիի մեջ պատկուած էր հայ ազլիկան մը հետ : Այժմ խնդրարկուն կը փափագի այս երկրորդ ամուսնութենէն իր ունեցած զաւակը, Հայ. եկեղեցւոյ օրէնքով մկրտել տալ և իբր մեր եկեղեցւոյ հարազատ զուակ և օրինաւոր ժառանգորդ արձանագրել : Ժողովը պատասխանած է թէ՛ ծնած զաւակը հայ եկեղեցւոյ մէջ մկրտուի իսկ, դարձեալ նոյն եկեղեցւոյ հարազատ զուակ չի համարուի :

Վերջին օրերս թուրք կառավարութիւնը, պատուանշաններու աղտոտ տարափ մը տեղացած է Պատրիարքարանի պաշտօնէութեան կուրծքին : Յարաբերական գիւնի տեսուչ Կարապետ էֆ., Թէլեան Բարթող և Սեպուհ Բլազեան էֆ.ները, Գ. կարդի Մէճիտիէ ստացեր են : Իսկ պատր. գործակատար Տէր Ներսէսեան՝ աստիճանի բարձրացում ձեռք բերել է : Ապրիլ : Դուրեան Սըլիշէ վարդապետին ալ տրուել է այդ անպատուանշանէն :

Սեպտ. 27ին, Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատան մէջ, կրօն. հանգեսով տեղի ունեցաւ Թաֆֆիի մահարձանին բացումը : Բնաւ ճառ չէ խօսուած, կառավարական խտրութեանց պատճառով :

Մահարձանը սպիտակ մարմարինէ սիւն մըն է, որուն գագաթը պապուած է քնարով մը դարձեալ մարմարէ : Սիւնին մէջ տեղը քանդակուած պսակ մը կայ, ուր կերեւայ «Բաֆֆի» անունը . . . և ատոր ներքեւ Յակոբ Մէլիք-Յակոբեանի (Բաֆֆի) «Ձայն տուր, ով ճովակ» ստանաւորին մէկ կտորը :

Կովկասահայ Պ. Ազ. երեցեան ընդարձակ աշխատասիրութիւն մը պատրաստած է «Հայոց կաթողիկոսութիւնը ժ. գարում» անունով, ամբողջապէս նուիրուած Ներսէս Աշտարակցիի շրջանին : Տիկին Ղատրեան անունը գրասէր հայրուհի մը ցանկութիւն յայտնել է 3,000 բուպիլի նուիրել այս կարեւոր երկին տպագրութեան համար :

Պոլսական թերթ մը կը գրէ թէ երբ չարագործներ, ձէնաի, Սայիտ Նատո և Հալիտ, որոնք կը փնտռուէին Մուշի մէջ իրենց ի գործ դրած ոճիրներուն համար, ինքնաբերաբար լինքը վրնքնին ստիկանութեան յանձնուել են : Կայս. կառավարութիւնը . . . ներում չնորհեր է այդ անկեղծներուն :

Վառնաի Թազ. Խորհրդոյ ընտրութիւնը տեղի պիտի ունենայ ամսոյս 18ին, կիրակի օր : Այժմէն պատրաստուած է ընտրուներու և ընտրելիներու ցանկ մը որ եկեղեցւոյ գաւթին մէջ ի տես պիտի դրուի :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԵՐ

Վիլհելմի Ուրեխի Ուրեխի ընդհատաին շոգենաւոր որուն մէջ կը գտնուէին թուրք հիւրընկալները, անցեալ երեք շաբթի օր, Տարտանելի նեղուցէն դուրս ելնելով գիւմաւորեց Հոնցուլէրն շքօսանաւը ուր կը գտնուէր Գերմանիոյ կայսերական գերդաստանը : Ժամ մը ետքը Հոնցուցուլէրն, Հէլա և Իզզետտին նեղուցէն ներս կը մտնային : Բոլոր ամբողջները սկսան թնդանօթ արձակել : Նեղուցին մէջ ուրիշ թրքական շոգենաւոր կը գրտնուէին, որոնց ընկերակցութեամբ Սուլթանին հիւրերը առօք փառօք Պոլիս ժամանեցին :

Վիլհելմի ընեցած բոլոր օսմանեան պատուանշանները ճիտէն վար կախած էր . . . իսկ կայսրուհին Շէֆապաթ կը կրէր : Տօլմա-Պահչէէն Երլազը գացած ատենին, Մարգարէին փոխանորդը Աւիուսգա կայսրուհին հետ մէկ կառք նստած էր, ինչ որ նախորդ ճամբորդութեան ատենուան պէս, այնքան զժգոհութիւն առաջ պիտի բերէ թուրք մոլեռանդ շրջանակներուն մէջ : Երկրորդ կառքին մէջ կը գտնուէր Վիլհելմի կայսրը և Մեծ-Եպարքոսը, որոնց կը հետեւէր պատուակալ տիկիններու և անթիւ հետեւորդներու շարքը :

Նոյն օրը կէս օրէն ետքը, Գերմանիոյ կայսրը ու կայսրուհին գերմանական դեպուտատունը գացին, ուր սեղան մը տրուեցաւ իրենց :

Իրիկո ան դէմ այցելեցին Բերալի գերմանական վարժարանը : Չորէք շաբթի օր կայսրը և կայսրուհին Պոլսոյ կազմը անցնելով, այցելեցին Թոփ-Գարուի պալատը, Գանձարանը, Թանգարանը, Գաւթի մզկիթը և Պոլսոյ պարիսպները :

Հինգ-շաբթի օր այցելեցին Սկիւսար, Չամլճա, Հայտար վաչայ, Հէրէքէի գործարանը և Իզմիտ : Երէկ, Մէլամլիքի արարողութիւն և մեծ զօրահանդէս 50,000 զինուորներու մասնակցութիւնով : Այսօր, Շարաթ, կայս-

ըր և կայսրուհին Պոլսէն կը մեկնին զէպի Պագետին, իրենց ետեւէն թողով խարստիկ կենդանութեան մը տխուր հետքերը:

ԿՐԷՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Գիտենք թէ պետութիւնները մերժողական պատասխան մը տուին Սուլթանին՝ կղզիին մէջ թուրք բաւականաչափ զինուորներ պահելու խնդրանքին: Եւ սա՛յն, իրենց վերջնագիրը կէտ առ կէտ գործադրելով հանդերձ, պատրաստականութիւն ցոյց տուեր են ապագային այդ կարգի թոյլտուութիւն մը ընել, իբր նշանակ մը Սուլթանական գերիշխանութեան:

Չարը Լիվատիա դառնալուն պէս, Ռուսիա նորէն պիտի աւազարկէ Կէօրկիոս իշխանին թեկնածութիւնը իբր Կրէտէի կառավարիչ:

Ծովակալները յայտարարած են թէ ձէվաա փաշայի յաջորդ՝ Օսման Նուրի փաշային և իր հետեւորդներուն թող չպիտի տան ցամաք ելնել: Այս մասին Գուռը դիմումներ քրած է պետութեանց: Ծովակալներու երեցը՝ Բոթիէ, ինդրեց որ քրիստոնեայ և իսլամ հասարակութեան նիւթական շահերուն օգտին համար, կալուածական և յարակից տոմարները ապահովութեան մէջ դըրուին, որպէս զի ուժեղութեան մը հետեւանքով չփճանան անոնք: Այս պահուս, խլամբերի ելինքնն ալ սկսած են անհամբեր սպասել թուրք զինուորներուն հեռացման: Պէյերը, Սուլթանին երկար հեռագիր մը զրկելով, ինդրեր են, որ տեղի տայ պետութեանց պահանջքին, և այսպէսով սպասէ իրենց կեանքը և ինչքերը: Կըսուի թէ ստորագրողներու զլուխը կը գտնուի կղզիին ամենէն գլխաւոր խռովարարներէն մէկը:

ՍՊԱՆԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

Բարիկի հաշտութեան յանձնաժողովը, որ կը շարունակէ իր նիստերը, մինչև հիմա սկզբունքի վերաբերեալ խնդիրներու վրայ վիճարանեցաւ և հաշտութեան բրոթոգոլին մէկ քանի մութ կէտերը պարզեց: Գուպանու Բորթո-Րիքոն պարպելու և Փիլիպպեաններու խնդիրը նկատողութեան չառու:

Լոնտոնէն կը հեռագրեն թէ սպանիացի պատուիրակները ամերիկացի պատուիրակներուն ներկայացուցեր են 1886-95, Գուպ կղզիին կնքած փոխառութիւններուն մէկ վիճակացոյցը, ցոյց տալով պարտքին այն մասը որ պէտք է կղզիին վրայ բեռնաւորութի, եթէ անկախ հոշակուի կամ Ամերիկայի կողմէ գրաւուի:

Ամերիկացիները չեն համաձայնած այս կէտին վրայ: Ռուսի

կը կարծուի թէ այս խնդիրը իրաւարար գաղափարներ մը վճռին ենթարկուի:

Պ. Սակասթա հրահանգ զրկած է սպանիացի պատուիրակներուն, աւարտելու Անթիլեաններու բանակցութիւնները, որոնք Փիլիպպեաններու խնդրին քննութիւնը կուշայեն:

Նախագահ Սաք-Քիլի, Մ. Նահանգաց այլևայլ տեղերը քրած ուղեւորութեան առթիւ, շատ մը բանախօսութիւններ քրած է, որոնցմով բացէ իրաց կը մերժէ կառավարութեան դէմ կնքած քըննադատութիւնները թէ որոշ քաղաքականութիւն մը չունի Սպանիոյ ձեռքէն առնուած երկիրներուն համար: «Բարիկի յանձնաժողովին մէջ բանակցութեան առարկայ եղած ամերիկեան աւազարկութեանց վրայ, յարեց, բան մը չեմ կրնար բռնել: Միայն գիտցէք որ, մեր պատուիրակները Ռուաչինկոնէ մեկնելուն, բացորոշ հրահանգներ ստացած են, որոնք բնաւ չպիտի փոխուին: Մ. Նահանգները պիտի չհրաժարին պատերազմին իրենց ընծայած առաւելութիւններէն: Միայն երկրակալութիւն չենք ուղեր, այլ առեւտրական նոր հրապարակներու պէտք ունինք»:

Կըսուի թէ Գարլոսեանները Սպանիոյ հիւսիային գաւառներուն մէջ յաջողեր են բաւական քանակութեամբ գէնք մտցնել: Պ. Սակասթա յայտարարեւ է որ, եթէ հաշտութեան վերջնական դաշնագիրը կնքուելէն ետքը, Գարլոսեաններէ վախ մը չունենայ, սահմանադրական երաշխաւորութիւններու գաղափար մը իսկայն պիտի վերցնէ:

ԻՅՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Սատեստին վաչա օր Սուլթանի կողմէն Ալպանիա զրկուած էր Պէճանաի նորագոյն խռովութիւնները քննելու, յանցաորները պատժած է: Ասկէց զատ 1,000 ոսկի հատուցում մը տուած է բռնարարուած քրիստոնեայ աղջկան ծնողաց:

Պոլսոյ մէջ զրոյց կայ թէ Մեծ-Գուքս Վլաաիմիր, Չարին հօրեղբայրը, յառաջիկայ ամսոյ մէջ Պոլիս պիտի երթայ, ներկայ գտնուելու յիշատակարանի մը բացման, որ կառուցուած է Կալաթարիա գիւղը, Սան-Սթէֆանոի մօտ, ի յիշատակ վերջին ռուսթուրք պատերազմին մէջ ինկած ռուս զօրքերուն:

Ֆրանս. կառավարութիւնը պատուով լէգէտի մեծ-ժապաւէնը շնորհած է պատերազմական նախարար Բիլլա փաշայի, և նոյն պատուանշանին սուլայութեան խաչը արտաքին գործոց նախարարութեան թարգման Կիլլապեան Միքայէլէ ֆիլին:

Լուչէնի մերժած ըլլալով ինքզինքին փաստաբան մը նշանակել, Չուրիցի բիական կառավա-

րութեան որոշումով փաստաբան Պ. Բիէն Մօրիօ իրեն պաշտպան կարգուեցաւ:

Ռարէլ, Օռոն և Բիլիթ Բէրիպլիք լրագիրները կը պա՛մեն թէ՛ կարեւոր զիրք գրաւող չօրավարի մը առաջնորդութեամբ, զինուորական գաւազարութիւն մը պատրաստուած էր, արդի կառավարութիւնը սաւալելու համար: Գէպքը տեղի պիտի ունենար անցեալ շաբաթ առաւօտ, որովհետեւ այդ օրը Շանուան զօրավարին Բարիկէ բացակայութիւնը աւելի նպաստաւոր էր գործին յաջող ելքին: Բարեբախտաբար կառավարութիւնը ժամանակին իմանալով, կրցեր է այդ պետական հարուածին առաջը առնել:

Պիլմարք իշխանին յիշատակարանը անդլիւրէնի թարգմանուելու արտօնութեան փոխարէն՝ գերմանացի տպագրիչները կէս միլիոն ֆրանք պահանջած են:

Վոլիաի հովիտը սովի վտանգին ենթարկուած է: Ռուսիոյ ներքին գործոց նախարարը անձամբ պիտի քննէ ուղեւոր դաւառները, և ամենէն կարօտեալներուն նպաստներ պիտի բաշխէ:

Բարիկ իր սովորական կերպարանքը վերստացած է: Գործաւորները աւելի հանդարտ են: Գրեթէ շէնքի բոլոր բանուորները վերսկսած են աշխատիլ:

Նախորդ հինգշաբթի օր, Սօֆիաի մէջ բացուեցաւ պուլկար գեղազորման ժողովը: Իրենց օրակարգին մէջ կարեւոր խնդիրներ կան որոնց լուծման պիտի աշխատին: Շահեկան է գիտնալ թէ արդեօք Պատ. Ժողովը, սա զեղբուն գինները քիչ մը զեղչելու որոշման մը պիտի կրնայ յանգիլ:

Կարգ մը ֆրանսացիներ հանգանակութեան ձեռնարկած են, անձնասպան Հանրի գնդապետին յիշատակին... մահարձան մը կանգնելու: Քարգանքի այս յիշատակարանը հետեւեալ արձանագրութիւնը պիտի կրէ:

«Երբ որ սպայ մը ստիպուած է կարծեցեալ կեղծարարութիւն մը գործել, իր երկրին խաղաղութիւնը շնորհելու և զայն դաւաճանէ մը աղատելու համար, այդ զինուորը ողբալի է:

Եթէ այդ գործին մէջ, իր կեանքը վրայ տայ, մարտիրոս է: Իսկ եթէ իր ձեռքով խլէ զայն, հերոս է...»:

Ժողովրդի մասին ԳՐԱՄԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ԹԱՂ, ԹԻԻ ԸԵ
Պարսկական հիւպատոսարանին ղեկավար Այս հաստատութիւնը որ տարիէ մը ի վեր գրքեր կը մատակարարէ բնութեանը հետեւ, նոր գրքերով ճոխացած կը շարունակէ բաց մնալ ամէն Գշ. եւ կիրակի ժամը 1-5. Իսկ Եշ. կէս օրէ ետքը միմիայն կանանց համար:



ԱՌԵՆՏՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՇԱԿ ՆԻԿՕԼԱ ԳՐԱԼԷԿ-ՎԱՌՆԱ

Գլխաւոր գործակալ Սօֆիա ֆալաֆի կառավարութեան կողմէն Լուչախաւորուած վիճակահանութեան

Պատու ունի ծանուցանել Վառնայի և շրջակայից արգոյ հասարակութեան թէ արդէն ի վաճառ հանած է սոյն վիճակահանութեան տոմսերը, իրենց բախոք փորձել ու գողները կը հրատարակին զիմել վերոյիշեալ գրասենեակը այդ տոմսերէն գնելու համար: Փափագողներու ձրիարար կը զրկուի վիճակահանութեան յայտագիրը և ամէն յարակից տեղեկութիւններ:

ՎԱՐԳՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ (ՀԱՅ ՅԵՂԱՔՈՒՍԱՆ ԿԵՆՏՐՈՆ) (Գիւն 1 Ֆրանկ)

Մնացած սակաւաթիւ օրինակներ կը ծախուին Վառնայի մէջ Շարժովի խմբագրատունը, Յիլիպէ՛ Տ. Անտոն Կոչի մօտ, Ռուսոյ՝ Չայկ Մայիսեանի սրճարանը, Սօֆիա՛ Տ. Մուշկ Արժուոյնի քով:

Մտերմ մտովին կը յանձնուի նոյն հեղինակին «Բոնութեան գոհերը»:

ՊՕՐՍԱ

Վառնա 7 Հոկտեմբեր
ՊՈՒՂՏԱՅ
Վալսն, լիպրա 55-58, հէքթօր 8.15-9.70 ֆրանք
Արապա, լիպրա 55-60 հէքթօր 9-12 ֆրանք

ԱՐԲԱ
Լիպրա 42-50 հէքթօր 5.20-5.80 ֆրանք

ԵՈՒՍԱՅ
Կիւնտէ 30-40 արապա կէլմէքտէ տիր 5-5.20 ֆրանք

ՆԱՐԸ
Կիւնտէ 5-6 արապա կէլմէքտէ տիր 58-60 լիպրա, 4.60-5 ֆրանք

ՅԱՍՈՒԼԵՍ
Կիւնտէ 70-80 արապա կէլմէքտէ տիր 100 օգգասը 15-21 ֆր. մալա կէտի:

Առապա մուամէլէտի նարօլէն 21 ֆրանք հիսապը իլէ տիր.
Կիւնտէ 15-20 լիպրա, 200-250 արապա պուղտայ, 70-80 արապա արբա կէլմէքտէ տիր:

Ա Ձ Դ

Պուրկազի Օրիզ Նասիօկալը թուական երկու ամիս ետքը վարձու պիտի տրուի տարեկան 3,000 ֆրանքով: Յիշեալ օրէկը կը պարունակէ 7 սենեակ ամբողջովին կահաւորուած և 15 անկողին իրենց կազմածներով: Նոյնպէս ստորնայորկը ճաշարան մը ունի կահաւորուած, այնպէս որ բացառիկ ծախքեր ընելու բնաւ պէտք չկայ: Փափագողները կը հրաւիրուին Պուրկազ, Պ. Գոստի փարթուրու իսկ հետ տեսակցելու:

Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ

Վառնայի մէջ կը վաճառուի Մուսալա, թանկի կէզդիպէ՛յի-Քեանի խանութը, և Ապուրբախան մզկիթին զեմը հայկական գրատունը: Ա. Չարպանլիանի քով:

Печантца „Взаимность“ Варна.